



N 22-11
09.02.2022

ՀՀ արդարադատության նախարար
պարոն Կարեն Անդրեասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Անդրեասյան,

ՀՀ ԱՆ ֆրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները (այսուհետ՝ Դիտորդների խումբ) ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ նույնասեռական (տվյալ դեպքում նույնասեռական ի նկատի չառնելով միայն սեռական կողմնորոշումը, ֆրեակատարողական հիմնարկներում այս հասկացության տակ ընկնում են նաև ֆրեական որոշ օրենքներով արգելված արարք կատարած և դրա համար պատժված անձինք) անձանց խցերն առանձնացված են, առանձնացված է նաև նրանց հեռախոսային հանգույցը՝ տախտաֆոնը, սնունդը նույնպես մատուցվում է առանձին տարաներով, հիմնարկի սանիտարափոխանիկ աշխատանքներում ընդգրկված են միայն այդ խմբի մարդիկ:

Նման երևույթները վկայում են այն մասին, որ ֆրեակատարողական հիմնարկներում գերիշխում է ֆրեական ենթամշակույթը, նշված խմբին պատկանող անձանց նկատմամբ առկա է անհանդուրժող մթնոլորտ և նրանք ենթարկվում են խտրական վերաբերմունքի:

Ուստի, առաջարկում ենք խստացնել ֆրեական ենթամշակույթի դեմ պայքարը, ինչպես նաև մշակել համապատասխան գործողությունների ծրագիր՝ ֆրեակատարողական հիմնարկներում խոցելի խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև ՊՈԱԿ) «Արմավիր» ՔԿՀ-ի ստորաբաժանման ներկայացուցիչների հետ ֆիննարկման արդյունքում պարզվել է, որ ՊՈԱԿ-ը հասանելիություն չունի «Արմավիր» համակարգին, որպեսզի կարողանան անմիջապես տեղեկատվություն ստանալ հիվանդի վերաբերյալ: Հատկապես խնդիր կարևորվում է այն դեպքում, երբ անձը նոր է մուտք գործել ֆրեակատարողական հիմնարկ, ունի առողջական խնդիրներ և ֆաղաֆախական հիվանդանոցում ստացել է բուժում: «Արմավիր» համակարգին հասանելիություն ունենալը ավելի դյուրին կդարձնի բժիշկների աշխատանքը, նրանք կտիրապետեն կալանավորի կամ դատապարտյալի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությանը՝ ֆրեակատարողական հիմնարկ մուտք գործելուն պես, արդյունքում՝ ազատագրված անձին ավելի արագ կարող են տրամադրել անհրաժեշտ բուժօգնությունը:

Նշվածի կապակցությամբ առաջարկում ենք ֆիննարկել «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ «Արմավիր» համակարգին միանալու անհրաժեշտությունը, ինչպես նաև կանոնակարգել ֆաղաֆախական հիվանդանոցներից հիվանդի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը ՊՈԱԿ-ին արագ փոխանցելու գործընթացը:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Զարուհի Հովհաննիսյան